



Առաջադրանք 3

Պատասխանների ձևաթուղթ Պահանջ N1 (5 միավոր)

Յուրաքանչյուր հարցում առաջարկվում է 4 պատասխան, որոնք պահանջում են բազմակի ընտրություն:

Ընտրեք միայն մեկը և դրեք \surd նշանը համապատասխան տողում

1	Դիտարկելով մանրադիտակի տակ երևացող պատրաստուկի բջիջները՝ ընտրեք ճիշտ պատասխանը: Երևում են.	1. ա,բ, գ	
		2. ա,դ	
		3. բ,գ,դ	
		4. ա,գ,դ	
2	Հացաթխման խմորասնկերի ո՞ր ներառուկներն են ներկվել Լյուգոլի լուծույթով	1. ա,գ,դ	
		2. միայն բ	
		3. ա,բ	
		4. ճիշտ են բոլորը	
3	Ի՞նչ գունավորում է առաջանում.	1. ա	
		2. բ	
		3. գ	
		4. դ	
4	Խմորասնկերի ներառուկները գտնվում են հիմնականում.	1. միայն ա	
		2. ա,բ,	
		3. միայն բ	
		4. ա,գ,դ	
5	Գրել սպիրտային խմորման քիմիական ռեակցիան		

Պահանջ N2 (5 միավոր)

Ճիշտ պնդումը նշել \surd նշանով, իսկ սխալ պնդումը՝ X նշանով

1.	Saccharomyces cerevisiae-ն առաջին էուկարիոտներն են, որոնց գենոմի ԴՆԹ-ի նուկլեոտիդային հաջորդականությունը որոշվել է	
2.	Խմորասնկերը կոչնչանան, եթե նրանց միտոքոնդրիումների գենոմում տեղի ունենա լետալ մուտացիա	
3.	Խմորասնկերը Գրամբացասական են	
4.	Որոշ խմորասնկեր բնակվում են հողում	

5.	Կախված պայմաններից՝ խմորասնկերի էներգիական փոխանակությունը ընթանում է խմորման կամ շնչառության ճանապարհով	
6.	Խմորասնկերի բջջապատը կազմված է պեպտիդազիկանից	
7.	Խմորասնկերի կենսական ցիկլում մեյոզ տեղի չի ունենում	
8.	Խմորասնկերը օգտագործում են անօրգանական նյութերը որպես էներգիայի և ածխածնի աղբյուր	
9.	Խմորասնկերի կենսագործունեության ընթացքում կաթնաթթու է կուտակվում միջավայրում	
10.	Գոյություն ունեն մարդու համար ախտածին խմորասնկեր	
11.	Saccharomyces ցեղի խմորասնկերը առաջացնում են իրական միցել	
12.	Խմորասնկերին պատկանում են այն բոլոր սնկերը, որոնք միաբջիջ փուլում ունակ են վեգետատիվ բազմացման	
13.	Խմորասնկերը հիմնականում պատկանում են կոմենսալներին	
14.	Խմորասնկերի բջջակորիզը բաժանվում է բողբոջի առաջացումից հետո	
15.	Խմորասնկերը կարող են առաջացնել լորձապատյան	
16.	Խմորասնկերի սպորները հապլոիդ են	
17.	Թթվածինը խմորման արգելակիչ է ածխաջրերի բարձր կոնցենտրացիայի պայմաններում	
18.	Ածխաթթու գազը խթանում է խմորումը	
19.	Խմորասնկերը խմորման ժամանակ ավելի մեծ զանգված են առաջացնում, քան շնչառության ժամանակ	
20.	Խմորասնկերը որպես սուբստրատ օգտագործում են միայն գլյուկոզը	

Մաղթում ենք հաջողություն